

Ուղեցույց սոցիալական ոլորտի մասնագետների համար՝ արտակարգ դրության ժամանակահատվածում երեխաների և նրանց ընտանիքների հետ մասնագիտական գործունեության շրջանակներում

Ցուցում: Սույն ուղեցույցը նախատեսված է սոցիալական ոլորտի՝ այդ թվում կրթական համակարգում ներառված մասնագետների կողմից իրականացվող աշխատանքներում կիրառելու համար, ինչպես նաև կարող է օգտագործվել երեխայի և ընտանիքի հետ աշխատող մասնագետների կողմից՝ հանդիսանալով որպես տեղեկատվական նյութ՝ բարձարացնելու իրազեկվածության մակարդակը խոցելի ընտանիքների սոցիալական հիմնախնդիրների, դրանց առաջնահերթությունների և միջմասնագիտական մոտեցման շրջանակներում լուծման հնարավորությունների վերաբերյալ

Համավարակի բացասական ազդեցությունները

Ազդեցություն երեխաների վրա՝

- ✚ Բռնության, շահագործման, անտեսման, սոցիալ-հոգեբանական ցնցումների և դրանց բացասական հետևանքների մեծացման ռիսկեր
- ✚ Ընտանիքից բաժանման արդյունքում երեխայի՝ ժամանակավորապես, հանգամանքներից կախված, առանց խնամակալի մնալու ռիսկեր
- ✚ Հաշմանդամություն ունեցող երեխաների՝ բարձր ռիսկային խմբում գտնվելու հավանականություն
- ✚ Երեխաների՝ սոցիալական մեկուսացման ենթարկվելու ռիսկ
- ✚ Սեռական բռնության և շահագործման ռիսկ, ներառյալ առցանց սեռական շահագործումը. հաշվի առնելով այն հանգամանքը, որ կարանտինային ժամանակահատվածում մարդիկ ավելի հաճախ են օգտվում համացանցից, երեխաների՝ սեռական շահագործման ենթարկվելու ռիսկերը մեծանում են, ուստի ծնողներն ու խնամակալները պետք է լինեն իրազեկված ու կրթված և դրսևորեն մեծ հետևողականություն:

Ազդեցություն ընտանիքների վրա՝

- ✚ Ընտանիքի կազմալուծում՝ ընտանիքների անդամների ժամանակավոր տարանջատում,
- ✚ Սոցիալական աջակցության հասանելիության նվազում,
- ✚ Խնամքի և հոգածության խաթարում,

- ✚ Բռնության/ընտանեկան բռնության կիրառման հավանականության աճ,
- ✚ Ներընտանեկան փոխհարաբերությունների և փոխադարձ աջակցության թուլացում,
- ✚ Հիվանդության հանդեպ վախ, սթրեսների առաջացում:

Ազդեցություն համայնքների վրա՝

- ✚ Վստահության կորուստ կառույցների նկատմամբ,
- ✚ Մրցակցային ռեսուրսների սղություն,
- ✚ Համայնքային ծառայությունների սահմանափակ հասանելիություն,
- ✚ Կրթության սահմանափակում:

Ազդեցություն հասարակության վրա՝

- ✚ Սոցիալական կապիտալի խաթարում,
- ✚ Ենթակառուցվածքների գործունեության խափանում,
- ✚ Հանրային ծառայությունների սահմանափակ հասանելիություն:

Երեխաների և նրանց ընտանիքների սոցիալական դեպքի վարումը՝ համավարակի ժամանակաշրջանում

Սոցիալական դեպքի վարումը շարունակական գործընթաց է ինչպես այն երեխաների և ընտանիքների համար, որոնց հետ մասնագիտական աշխատանքներն իրականացման ընթացքի մեջ են, այնպես էլ նրանց համար, որոնց դեպքի վարումը մեկնարկել է՝ ելնելով համավարակի պատճառով ռիսկային խմբում հայտնված երեխաների և նրանց ընտանիքների վրա կենտրոնանալու անհրաժեշտությունից: Համավարակի բացասական հետևանքներից և դրանց ազդեցության պատճառով ռիսկային իրավիճակում գտնվող երեխաների ու նրանց ընտանիքների խոցելիության աստիճանից ելնելով, սոցիալական դեպքի վարման մասնագետներն ու սոցիալական ոլորտի կառույցներն անհրաժեշտություն են ունենում վերանայելու իրենց մասնագիտական գործունեության ընթացքն ու մեխանիզմները: Այդ ժամանակահատվածում սոցիալական աշխատողների առջև դրվում են հետևյալ խնդիրները.

- ✚ Վերանայել աշխատանքի ծանրաբեռնվածությունն ու գնահատել, թե որ երեխաներն են գտնվում առավել ռիսկային, և որոնք՝ համեմատաբար կայուն իրավիճակում, և հետևաբար՝ որ դեպքերում է անհրաժեշտ իրականացնել անմիջական միջամտություն և որ դեպքերում՝ տրամադրել հեռավար աջակցություն:
- ✚ Մշակել խոցելիության և առաջնահերթության չափանիշներ երեխաների շահերի պաշտպանությանն առնչվող դեպքերի համար, հայտնաբերել հաշմանդամություն ունեցող, կրթությունից դուրս մնացած, ինչպես նաև մյուս խոցելի խմբերի երեխաներին, որոնք գտնվում են առավել ռիսկային

իրավիճակում ընտանիքի տարանջատման, բռնության, շահագործման, անտեսման և առանց խնամքի մնալու պատճառով:

- ✚ Համավարակի պայմաններում երեխաների և նրանց ընտանիքների հետ իրականացվող սոցիալական դեպքի վարման գործընթացում անհրաժեշտ է հաշվի առնել ՔՈՎԻԴ -19-ի հետ կապված բոլոր ռիսկերը՝ ուսումնասիրելով ինչպես ընտանիքի բնակության պայմանները, այնպես էլ երեխայի կամ ընտանիքի՝ դեպք վարողի հետ կապ հաստատելու հնարավորություններն արտակարգ իրավիճակում:

Հարկ է նշել, որ համավարակի ընթացքում կարող է գրանցվել դեպքերի շարունակական և կտրուկ աճ՝ կապված համավարակի բացասական ազդեցությունների հետ՝ ներընտանեկան փոխհարաբերությունների լարվածություն, բռնության հավանականություն ու սթրեսային իրավիճակներ: Այս առումով խորհուրդ է տրվում իրականացնել մի շարք գործողություններ.

- ✚ Մշակել գործողությունների պլան այն ուղղությամբ, թե ինչպես վարել ռիսկային դեպքերը՝ կազմել և իրականացնել անհատական զարգացման ծրագիր յուրաքանչյուր երեխայի և ընտանիքի համար, իրականացնել անհրաժեշտությունից բխող շարունակական մոնիթորինգ:
- ✚ Անցնել համապատասխան վերապատրաստումներ ՔՈՎԻԴ -19-ի, ինչպես նաև համավարակի ազդեցության և հետևանքների ուղղությամբ:
- ✚ Համագործակցել առողջապահական ոլորտի դերակատարների հետ՝ հաշմանդամություն ունեցող և խոցելի երեխաների համար ներառական, կրթության հասանելիությանն ուղղված ռազմավարություն մշակելու առումով:
- ✚ Իրագրել տեղական առողջապահական ոլորտի դերակատարներին, որպեսզի աշխատանքի ընթացքում առնչվելով ընտանիքների հետ, վերջիններս նույնպես կարողանան հայտնաբերել և ուղղորդել կյանքի դժվարին իրավիճակում հայտնված ընտանիքներին:
- ✚ Համայնքի բնակիչներին տրամադրել համապատասխան գիտելիքներ և կարողություններ՝ վարակը կանխելու, ինչպես նաև համավարակի ընթացքում երեխաների նկատմամբ անհրաժեշտ խնամք, կրթության հասանելիություն ապահովելու վերաբերյալ:
- ✚ Հայտնաբերել այն երեխաներին, որոնք արդեն իսկ մեկուսացված են կամ խոցելի և ունեն անհրաժեշտ ծառայություններից օգտվելու հասանելիության խնդիր:

- Հաշվի առնելով արտակարգ դրության ժամանակահատվածում երեխայի և նրա հետ աշխատող մասնագետի առջև ծագած խնդիրները և դրանց հաղթահարման անհրաժեշտությունը, առաջարկվում է կիրառել համապատասխան գործիք՝ **ռիսկերի գնահատման մատրիցա**, որտեղ ներկայացված ռիսկերի ցուցանիշները հնարավորություն են տալիս դասակարգել սոցիալական դեպքերն՝ ըստ խոցելիության աստիճանի՝ համավարակի ժամանակահատվածի համատեքստում: Հարկ է նշել, որ աղյուսակը կիրառելի է որպես գործիք սոցիալական աշխատողի կամ դեպք վարողի համար՝ ադապտացվելով կոնկրետ սոցիալական դեպքի հանգամանքներին:

Ռիսկերի գնահատման մատրիցա

Ռիսկայնության մակարդակ	Առաջարկվող գործողություն
Կարմիր	<p>Բարձր ռիսկայնության դեպքեր կամ հրատապ իրավիճակներ՝</p> <p>Գտնել երեխայի և ընտանիքի հետ դեպքի վարման աշխատանքներ իրականացնելու տարբերակներ և մշակել անմիջական գործողությունների իրականացման պլան՝ ուղղված խոցելիության նվազեցմանը:</p>
Դեղին	<p>Միջին ռիսկայնության դեպքեր կամ ոչ հրատապ իրավիճակներ՝</p> <p>Որոշել՝ արդյոք հնարավոր է կազմակերպել հեռավար աջակցություն: Հակառակ դեպքում երեխայի և ընտանիքի հետ քննարկման արդյունքում որոշել, թե ինչպես, ինչ մեթոդներով շարունակել մասնագիտական աջակցությունը և հնարավորինս նվազեցնել ընտանիքի խոցելիությունը: Անմիջական միջամտություն կամ իրավիճակի մոնիթորինգ բարձր ռիսկայնության իրավիճակների հետ համեմատած՝ իրականացվում է խիստ անհրաժեշտության դեպքում՝ ապահովելով հնարավորինս անվտանգ</p>

	շփում երեխայի և նրա ընտանիքի հետ:
Կանաչ	Ցածր ռիսկայնության դեպքեր կամ կայուն իրավիճակներ՝ Պահպանել շարունակական կապը երեխայի և ընտանիքի հետ՝ կիրառելով վերջիններս հետ հեռավար աշխատանքի ամենաարդյունավետ և ընդունելի եղանակը/մեթոդը:

Ռիսկերի գնահատման մատրիցայի հիման վրա իրականացվող սոցիալական դեպքի վարման առաջարկվող մոդել

Ուսումնասիրելով ծրագրի շրջանակներում ներառված ընտանիքների և երեխաների հիմնախնդիրները՝ ներառյալ կրթական, մշակութային, առողջապահական, սոցիալական և այլն, նպատակահարմարություն է առաջանում իրականացնել դեպքի վարման աշխատանքները՝ հետևելով ռիսկայնության գնահատման վերոնշյալ մատրիցային:

Դեպքերի վարման ընթացքում անհրաժեշտ է ուշադրությունը կենտրոնացնել հետևյալ ընտանիքների վրա՝

- ✚ Ընտանիքներ, որոնք դասակարգվել են որպես միջին և բարձր ռիսկայնության՝ կապված հաշմանդամություն, զարգացման խնդիրներ կամ կրթական բացթողումներ ունեցող երեխաների առկայությամբ:
- ✚ Ընտանիքներ, որոնց միակ եկամուտը կազմում է երեխային կամ ընտանիքին տրամադրվող նպաստը և հետևաբար, ընտանիքը հնարավորություն չունի ապահովել երեխայի՝ կրթական գործընթացի հասանելիությունը՝ համացանցի, տեխնիկական միջոցների ու սարքավորումների առումով:
- ✚ Ընտանիքներ, որտեղ ծնողները կամ խնամակալները տարեց են կամ ունեն ուղեկցող այնպիսի առողջական խնդիրներ, որոնք բարձրացնում են վարակի բացասական լուրջ հետևանքների հավանականությունը (օրինակ՝ շաքարային դիաբետ, շնչառական հիվանդություններ, բրոնխիալ ասթմա, սրտանոթային հիվանդություններ և այլն)

- ✚ ՔՈՎԻԴ -19- ի հետևանքով ի հայտ եկած դեպքեր, որոնք կարող են ռիսկային լինել երեխայի նկատմամբ այլընտարանքային խնամքի անհրաժեշտության առումով:

Բարձր ռիսկայնություն ունեցող դեպքերի ժամանակ առաջնահերթությունը պետք է տրվի՝

- ✚ Այն երեխաներին, որոնք հեռացել են իրենց ծնողներից կամ խնամակալներից՝ բժշկական հաստատություններ կամ ճգնաժամային կենտրոններ տեղավորվելու նպատակով
- ✚ Այն երեխաներին, որոնք ունեն ուսումնական գործընթացում ներառվելու, կրթական ծառայություններից օգտվելու հասանելիության խնդիր
- ✚ Այն ընտանիքների երեխաներին, որոնք ունեն տեղաշարժի և հետևաբար, անհրաժեշտ ծառայություններից օգտվելու սահմանափակումներ
- ✚ Հաշմանդամություն և/կամ ուղեկցող հիվանդություններ ունեցող երեխաներին
- ✚ Այն երեխաներին, որոնք վարակակիր են և կարող են պիտակավորվել կամ մերժված լինել իրենց հարազատների կամ հասարակության կողմից
- ✚ Այն ընտանիքների երեխաներին, որոնց անդամներից որևէ մեկը վարակակիր է:

Ռիսկայնության մակարդակը	Միջամտության եղանակը, երբ ընտանիքում կամ մոտ միջավայրում առկա չէ վարակի գրանցված դեպք	Միջամտության եղանակը, երբ ընտանիքում կամ մոտ միջավայրում առկա է վարակի գրանցված դեպք
Կանաչ (Կայուն իրավիճակ կամ ցածր ռիսկայնություն)	Հեռախոսով կամ առցանց	Միջամտությունն իրականացնել բացառապես անուղղակի եղանակով՝ նախընտրելով ընտանիքի համար
Դեղին (Ոչ հրատապ իրավիճակ կամ միջին ռիսկայնություն)	Հեռախոսով կամ առցանց Անհրաժեշտության դեպքում իրականացնել ուղղակի միջամտություն,	

	օրինակ, տնայց՝ անվտանգության բոլոր համապատասխան միջոցները ձեռնարկելով:	ամենանպատակահարմար և ընդունելի տարբերակը
Կարմիր (Հրատապ իրավիճակ կամ բարձր ոխսկայնություն)	Իրականացնել ուղղակի միջամտություն, օրինակ, տնայց՝ անվտանգության բոլոր համապատասխան միջոցները ձեռնարկելով	

Սոցիալական ոլորտի մասնագետները պետք է իրազեկված լինեն.

- ✓ Ընտանիքում երեխաներին և դեռահասներին, ինչպես նաև տարեցներին և խնամքի կարիք ունեցողներին համապատասխան մասնագիտական աջակցություն տրամադրելուն ուղղված ծառայությունների և դրանց հասանելիության մեխանիզմների մասին,
- ✓ Ծնողներին ու խնամակալներին, կրթական, առողջապահական և սոցիալական ոլորտի աշխատողներին, ինչպես համավարակի դեմ պայքարի գործընթացում ներգրավված մասնագետներին ու կամավորներին երեխաների կրթական կարիքների ապահովման, նրանց սոցիալ-հոգեբանական բարենպաստ միջավայրի, ինչպես նաև հնարավոր մեկուսացման պայմանների մասին անհրաժեշտ խորհրդատվություն տրամադրելու վերաբերյալ,
- ✓ Երեխայի և ընտանիքի հետ աշխատող մասնագետների իրազեկվածության բարձրացմանն ուղղված մեխանիզմների վերաբերյալ՝ ինչպես զբաղվել ինքնախնամքով, կառավարել սթրեսը, ապահովել սոցիալ-հոգեբանական բարենպաստ մթնոլորտ համավարակի տարածման ժամանակ,
- ✓ Մասնագիտական աջակցություն իրականացնող սոցիալ-հոգեբանական ծառայությունների և դրանց հասանելիության վերաբերյալ,
- ✓ Արտակարգ դրության ժամանակահատվածում երեխայի և ընտանիքի հիմնախնդիրների լուծմանն ուղղված մի շարք օրենքների, իրավական ակտերի և փաստաթղթերի, ինչպես նաև անհրաժեշտ ծառայությունների թեժ գծի հեռախոսահամարների մասին՝

- ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի հրամանը հանրակրթական ուսումնական հաստատություններում հեռավար կրթության կազմակերպման կարգը հաստատելու մասին,
- «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքը,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքը,
- «ՀՀ-ում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքը,
- «Զբաղվածության մասին» ՀՀ օրենքը,
- «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքը,
- «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքը,
- «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքը,
- Միջգերատեսչական սոցիալական համագործակցության կանոնակարգը սահմանելու մասին ՀՀ կառավորության որոշում, 10 սեպտեմբերի 2015 թ, N 1044- Ն,

Թեժ գծի հեռախոսահամարներ

**Առողջապահության
նախարարություն** **060 838300**

**Երեխաների
պաշտպանության թեժ գիծ** **060 540150
080 061111**

**Մարդու իրավունքների
պաշտպան** **116**

Պարետատուն **8141**

**Աշխատանքի և
սոցիալական հարցերի
նախարարություն** **114**